

քաղ. Երևան

«21» հոկտեմբեր 2012թ.

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը՝ ի դեմս նախարար ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ, որը գործում է Հայաստանի Հանրապետության անունից, իր լիազորությունների սահմաններում (այսուհետ՝ լիազոր մարմին) մի կողմից, և << ԴԻՆՈ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ ՔԱՄՓՆԻ >> ՓԲԸ տնտեսավարող սուբյեկտը (այսուհետ՝ ընդերքօգտագործող), ի դեմս գլխավոր տնօրեն ԻԼՅԱ ԳԱՐԿՈՎԻ, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրք) և այլ իրավական ակտերով, համապատասխանաբար նախարարության և տնտեսավարող սուբյեկտի կանոնադրություններով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան փաստաթղթերը, հանքավայրի տրամադրվող տեղամասի շահագործման նախագիծը, կնքեցին սույն ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պայմանագիրը նախատեսում է հանքավայրը կամ հանքավայրի տեղամասը շահագործման տրամադրելու պայմանները և ժամկետները, լեռնահատկացման կորորդինատները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, վճարների (բնօգտագործման, բնապահպանական, բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համայրման, մշտադիտարկումների իրականացման) վճարման վերաբերյալ դրույթներ, բնապահպանական կանոնակարգման պլանը, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման (զգուշացման, հրաժարման, փոփոխության), համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ, հանքի փակման հետ կապված դրույթները, ինչպես նաև նրանց փոփոխաբերությունները կարգավորող այլ պայմաններ:

1.2 Պայմանագիրը բաղկացած է հիմնական տեքստից և N 1 հավելվածից, որը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը:

1.3 Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները, այդ թվում՝ կողմերի այլ իրավունքները կարգավորվում են օրենսգրքով, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:

## 2. Պայմանագրի առարկան

2.1 Պայմանագրով՝ լիազոր մարմինն ընդերքօգտագործողին տարեկան 600.0 հազ.տ օգտակար հանածոյի պաշարների մարման (օգտակար հանածոյի քանակը, մ<sup>3</sup>, գ/տ) համար ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում 2011թ դեկտեմբերի 22-ից մինչև 2020թ հուլիսի 14-ը ժամկետով, իսկ ընդերքօգտագործողն ընդունում է

«Սյունիքի մարզի Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի (հանքավայրի անվանումը)

ա/ 780 մ հորիզոնից վեր գտնվող 1,2,3,5-րդ տեղամասերի հանքերակներ թ.թ.-27, 27ա, 28, 31,25,43,65,46,1հրվ, 71, 41, 61,36,34, 33,57,58,5հս, 35ա,7ա, 5x հրվ., 44: 780 մ հորիզոնից վեր գտնվող հանքաքարում օգտակար բաղադրիչների պարունակությունը.

Ոսկի C<sub>1</sub> կարգով-2.47գ/տ, C<sub>2</sub> կարգով-2.09, արծաթ C<sub>1</sub> կարգով-51.82գ/տ, C<sub>2</sub> կարգով-40.67գ/տ, պղինձ C<sub>1</sub> կարգով-0.56 %, C<sub>2</sub> կարգով- 0.56 %, ցինկ C<sub>1</sub> կարգով-3.03 %, C<sub>2</sub> կարգով- 2.79 % , կապար C<sub>1</sub> կարգով-018 %, C<sub>2</sub> կարգով- 0.14 % ,

բ/ 780-700 հորիզոնների միջև գտնվող 1,2,3,5-րդ տեղամասերի հանքերակներ թ.թ.5 հրվ, 6, 5x հրվ,1ա, 2 . 1,2ա,44, 25,

31,28,27ա,27,35ա,5հս,46,61,36,41,71,1հրվ,34,33,57,58:

780-700 մ հորիզոնում գտնվող հանքաքարում օգտակար բաղադրիչների պարունակությունը.

Ոսկի C<sub>1</sub> կարգով-3.04գ/տ, C<sub>2</sub> կարգով-3.07, արծաթ C<sub>1</sub> կարգով-55.50գ/տ, C<sub>2</sub> կարգով-60.92գ/տ, պղինձ C<sub>1</sub> կարգով-0.72 %, C<sub>2</sub> կարգով- 0.65 %, ցինկ C<sub>1</sub> կարգով-2.98 %, C<sub>2</sub> կարգով- 2.69 % , կապար C<sub>1</sub> կարգով-020 %, C<sub>2</sub> կարգով- 0.13 % ,

---

հաշվեկշռային պաշարներն օգտագործման ամբողջ ժամկետի համար

3805159.0 տ

ըստ C<sub>1</sub>+ C<sub>2</sub> կարգերի

(հիմնական և ուղեկից օգտակար հանածոների քանակները՝ ըստ կարգերի)

---

Տրամադրվող օգտակար հանածոյի պաշարները ըստ հանքային մարմինների՝ համաձայն՝ հավելված 2-ի

(օգտակար հանածոյի պաշարների տեսակները (տարատեսակները)

(օգտակար հանածոյի լեռնային զանգվածից հանքարտադրատեսակի ելքը)

Լեռնահատկացման սահմանները հատակագծի վրա և ըստ խորության համաձայն լեռնահատկացման ակտի թիվ ԼՎ- 183

(ակտի համարը)

Պայմանագրի N 1 հավելվածով նշվում են ընդերքօգտագործողի ֆինանսական առաջարկները և նրա կողմից վճարվող ընդերքօգտագործման վճարները:

Պայմանագիրն ըստ անհրաժեշտության կարող է ունենալ նաև այլ հավելվածներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման և հումքի վերամշակման

աշխատանքների ժամկետները, ըստ փուլերի, իսկ զուգահեռաբար երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու դեպքում դրանց կատարման ժամանակացույցի:

2.2 Լիազոր մարմինը երաշխավորում է, որ պայմանագրի 2.1-ին կետում նշված հանքավայրը կամ հանքավայրի տեղամասը գրավ դրված, վարձակալության, անհատույց օգտագործման տրված չէ, կառուցապատված կամ կառուցապատման իրավունքով ծանրաբեռնված չէ, ինչպես նաև արգելանքի տակ չի գտնվում:

2.3 Պայմանագրի գործողության ընթացքում հանքավայրի օգտագործման արդյունքում ընդերքօգտագործողի ստացած շահույթը նրա սեփականությունն է:

### **3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

#### **3.1 Լիազոր մարմինը իրավունք ունի՝**

3.1.1 ընդերքօգտագործողից պահանջելու հանքավայրը շահագործել ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում ընդունված ստանդարտներին, նորմերին ու կանոններին համապատասխան.

3.1.2 գրավոր զգուշացնելու և վաղաժամկետ լուծելու պայմանագիրն օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն.

3.1.3 ստուգելու ընդերքօգտագործման ընթացքում երկրաբանական և մարկշեյդերական փաստագրության վարման լիարժեքությունը, օգտակար հանածոների պաշարների շարժի հաշվառման իրականացման և տեղեկատվության ներկայացման սահմանված պահանջների կատարումը.

3.1.4 ստուգելու ընդերքօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների, վճարների հաշվարկման և հաշվարկ-հաշվետվությունների ներկայացման կարգի պահանջների կատարումը.

3.1.5 ստուգելու ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված պարտավորությունների և նախագծի պահանջների կատարումը՝ բացառությամբ բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունների.

3.1.6 պահանջելու ընդերքօգտագործողից օգտակար հանածոների պաշարների լիակատար կորզում և հիմնական ու համատեղ գտնվող օգտակար հանածոների և դրանց ուղեկցող բաղադրամասերի ողջամիտ և համալիր օգտագործում կամ դրանց պահեստավորումն ու պահպանումը.

3.1.7 պահանջելու ընդերքօգտագործողից ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում նրանց տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկությունը 3 ամսվա ընթացքում հանձնել լիազոր մարմնին.

3.1.8 իրականացնելու ընդերքի տրամադրված տեղամասում երկրաբանական ուսումնասիրություններ, բացառությամբ օգտակար հանածոների հայտնաբերման նպատակով, այդ մասին առնվազն 14 օր առաջ գրավոր իրազեկելով ընդերքօգտագործման իրավունք կրողին.

3.1.9 ստուգվող սուբյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գործելու ստուգվող սուբյեկտի գրասենյակային, արտադրական, պահեստային, լաբորատոր և այլ տարածքներ ու ստորաբաժանումներ.

3.1.10 ստուգման ընթացքում ստուգվող սուբյեկտից պահանջելու փաստաթղթեր, տվյալներ, բացատրություններ, տեղեկանքներ, ինչպես նաև վերցնելու փորձանմուշներ, կատարելու կապարակնքում և չափագրումներ, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին.

3.1.11 ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողություն իրականացնելու տեսչական ստուգումների, ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի դրույթներին համապատասխան:

### **3.2 Լիազոր մարմինը պարտավոր է՝**

3.2.1 ընդերքօգտագործողին սահմանված կարգով տրամադրել հանքավայրին վերաբերվող փաստաթղթերը.

3.2.2 գրավոր իրազեկել ընդերքօգտագործողին առնվազն 14 օր առաջ ընդերքի տրամադրված տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու համար օրենսգրքի 3-րդ հոդվածի 5-րդ կետով տրված համաձայնության մասին:

### **3.3 Ընդերքօգտագործողն իրավունք ունի՝**

3.3.1 բացառիկ իրավունքով կատարելու երկրաբանական ուսումնասիրություն լեռնահատկացման սահմաններում, իսկ հատկացված ընդերքի տեղամասում՝ օգտակար հանածոյի արդյունահանում.

3.3.2 մտնելու ընդերքի տեղամաս և իրականացնելու նախագծով նախատեսված բոլոր աշխատանքներն օգտակար հանածոյի արդյունահանման և ուսումնասիրության նպատակով.

3.3.3 օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով կառուցելու անհրաժեշտ շենքեր, շինություններ, հաղորդակցության ուղիներ, տեղադրելու սարքավորումներ, փոխադրելու և հարստացնելու արդյունահանված օգտակար հանածոն.

3.3.4 տնօրինելու արդյունահանված օգտակար հանածոն.

3.3.5 օրենսգրքի պահանջների պահպանմամբ հանքարդյունահանման իրավունքի ընթացքում օգտագործելու սեփական գործունեության արդյունքում առաջացած արտադրական լցակույտերը.

3.3.6 իրեն տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի շրջանակում երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքմամբ ներգրավելու երրորդ անձանց.

3.3.7 դիմելու լիազոր մարմին օգտակար հանաժողի արդյունահանման պայմանագրի պայմանները փոփոխելու նպատակով, եթե հայտնվել են էապես նոր՝ նախկինում չնախատեսված հանգամանքներ.

3.3.8 վաղաժամկետ հրաժարվելու օգտակար հանաժողի արդյունահանման իրավունքից՝ կատարելով պայմանագրով և օրենսգրքով նախատեսված պարտավորությունները:

### **3.4 Ընդերքօգտագործողը պարտավոր է՝**

3.4.1 իրականացնել աշխատանքներն օգտակար հանաժողի արդյունահանման պայմանագրի և նախագծի պայմաններին համապատասխան.

3.4.2 կատարել լիազոր մարմնի և այլ իրավասու պետական մարմինների՝ օրենսդրության պահանջների պահպանման նպատակով տրված ցուցումները.

3.4.3 պահպանել օգտակար հանաժողի արդյունահանման, տեղափոխման և վերամշակման ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ընդունված ստանդարտների, նորմերի ու կանոնների պահանջները.

3.4.4 ապահովել օգտակար հանաժողի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը.

3.4.5 վարել երկրաբանական, մարկշեյդերական և այլ փաստագրություն, պահպանել դրանք ընդերքօգտագործման բոլոր ձևերի աշխատանքների ընթացքում.

3.4.6 վարել օգտակար հանածոների պաշարների ամենօրյա շարժի գրանցամատյանը.

3.4.7 ներկայացնել լիազոր մարմին օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունները.

3.4.8 հանձնել լիազոր մարմնին անհրաժեշտ երկրաբանական տեղեկությունը.

3.4.9 հավաքել, պահպանել և լիազոր մարմնին տրամադրել ուսումնասիրված, արդյունահանված և ընդերքում կորսված օգտակար հանածոների պաշարների, դրանց պարունակած բաղադրամասերի, որակի ու քանակի մասին տվյալներ.

3.4.10 ապահովել ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների կատարման անվտանգությունը.

3.4.11 ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի ու բնության և շրջակա միջավայրի մյուս օբյեկտների, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից.

3.4.12 ապահովել բնության, պատմական և մշակույթի հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից.

3.4.13 ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացությամբ նախատեսված պայմանները.

3.4.14 նախագծի և օգտակար հանաժողի արդյունահանման պայմանագրի համաձայն վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված

հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար կամ բերել անվտանգ վիճակի:

3.4.15 տեղեկացնել լիազոր մարմնին օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրում չնշված օգտակար հանածոների կուտակումների հայտնաբերման մասին դրանց հայտնաբերումից հետո՝ 14 օրվա ընթացքում:

3.4.16 նոր հայտնաբերված օգտակար հանածոների արդյունահանում չիրականացնելու դեպքում իրականացնել դրա պահուստավորումը կառավարության սահմանած կարգով:

3.4.17 ապահովել հանքի փակման ծրագրի, այդ թվում՝ հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսվող միջոցառումների իրականացումը:

3.4.18 ապահովել փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման նախատեսվող միջոցառումների իրականացումը:

3.4.19 ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:

3.4.20 ոչ ուշ, քան հինգ տարին մեկ անգամ շահագործվող հանքավայրում (տեղամասում) կոնդիցիաները և պաշարները ենթարկել վերազնահատման և ներկայացնել լիազոր մարմնի վերահաստատմանը:

3.4.21 ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում իր տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկությունը 3 ամսվա ընթացքում սահմանված կարգով հանձնել լիազոր մարմնին:

3.4.22 տեղեկացնել ընդերքօգտագործման իրավունքի իրավահաջորդության մասին լիազոր մարմնին վերակազմակերպման գրանցման պահից 14 օրվա ընթացքում:

3.4.23 սկսել աշխատանքները սահմանված կարգով հողատկացման իրավունքի տրամադրումից հետո:

3.4.24 թույլատրել լիազոր մարմնին ստուգման նպատակով անարգել մուտք գործելու գրասենյակային, արտադրական, պահեստային, լաբորատոր և այլ տարածքներ ու ստորաբաժանումներ:

3.4.25 տրամադրել լիազոր մարմնին ստուգման ընթացքում պահանջվող փաստաթղթեր, տվյալներ, բացատրություններ, տեղեկանքներ, ինչպես նաև թույլատրել վերցնելու փորձանմուշներ, կատարել կապարակնքում և չափագրումներ, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին:

3.4.26 կատարել Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված բոլոր պարտականությունները:

## **4. Չգուշացում**

4.1 Լիազոր մարմինը, օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն, կարող է ընդերքօգտագործողին տալ զգուշացում, եթե նա՝

4.1.1 չի կատարում օրենսգրքով նախատեսված պարտավորությունները.

4.1.2 չի կատարում ընդերքօգտագործման իրավունքի պայմանները, այդ թվում՝ պայմանագրով, նախագծով ընդերքօգտագործման իրավունքով նախատեսված իր պարտավորությունների իրականացմանն առնչվող պայմանները՝ բացառությամբ օրենսգրքով սահմանված դեպքերի.

4.1.3 չի վճարել օրենքով նախատեսված վճարները՝ սահմանված օրվանից մեկ ամսվա ընթացքում:

4.2 Լիազոր մարմինն իրավունք չունի որոշում ընդունելու ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման մասին, եթե իրավունք կրողը զգուշացման մասին ծանուցումը ստանալուց հետո՝ ոչ ավելի, քան 90 օրվա ընթացքում վերացրել է նշված հիմքերը:

## **5. Հաշվետվություններ և տեղեկություն**

5.1 Ընդերքօգտագործման իրավունք կրողը լիազոր մարմին օրենսգրքով, այլ օրենքներով սահմանված կարգերով պարտավոր է ներկայացնել հետևյալ հաշվետվությունները և տեղեկությունները՝

5.1.1 ընդերքօգտագործման բնագավառում բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություն.

5.1.2 օգտակար հանածոների պաշարների տարեկան հաշվետվություն (5-ՕՀՊՀ).

5.2 Հաշվետվությունների ձևերի փոփոխման դեպքում լիազոր մարմինը պարտավոր է այդ մասին տեղեկացնել ընդերքօգտագործողին՝ փոփոխությունների կատարման պահից մեկամսյա ժամկետում:

5.3 Ընդերքօգտագործողը սահմանված վճարների վերաբերյալ տեղեկատվությունը լիազոր մարմին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում, կարգով և ձևով:

## **6. Պայմանագրի ուժի մեջ մտնելը, գործողության ժամկետը և լուծումը**

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է թույլտվության գործողության ամբողջ ժամանակահատվածում, եթե պայմանագրով սահմանված հիմքերով պայմանագիրը վաղաժամկետ չի լուծվել:

6.2 Պայմանագիրը գործում է նաև ժամկետի կամ թույլտվությամբ տրամադրված ընդերքի տեղամասի սահմանված կարգով փոփոխության դեպքում: Եթե երկարաձգվել է թույլտվության պայմանների փոփոխությամբ, ապա պայմանագիրը շարունակում է գործել՝ հաշվի առնելով այդ փոփոխությունները:

6.3 Պայմանագիրը կարող է լուծվել՝

6.3.1 լիազոր մարմնի նախաձեռնությամբ՝ ընդերքօգտագործողի կողմից պայմանագրի դրույթների խախտման դեպքում.



6.3.2 ընդերքօգտագործողի նախաձեռնությամբ՝ ընդերքօգտագործողի կողմից ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ հանդիսացող ընդերքի ամբողջ տեղամասից հրաժարվելու դեպքում դիմում ներկայացնելու և լիազոր մարմնի կողմից հրաժարման հավաստագիր տրամադրելու դեպքում:

6.3.3 թույլտվության ժամկետի ավարտի դեպքում:

6.4 Լիազոր մարմնի կողմից թույլտվությունն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով վաղաժամկետ դադարեցվելու դեպքում պայմանագիրը համարվում է լուծված:

## **7. Պայմանագրում փոփոխություն կատարելու հիմքերը**

Լրահետախուզման և (կամ) շահագործական հետախուզման արդյունքում հանքավայրում պաշարների էական փոփոխության, հանքավայրի լեռնաերկրաբանական, տեխնիկատնտեսական պայմանների զգալի փոփոխման դեպքում ընդերքօգտագործողի առաջարկությամբ լիազոր մարմինը կարող է ընդերքօգտագործման իրավունքը ձևավորող փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություններ: Հանքավայրի շահագործման փոփոխված պայմանները ներկայացվում են առանձին (հավելված ---):

## **8. Անհաղթահարելի ուժի, ինչպես նաև կողմերի գործունեության հետ չկապված դեպքեր**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլ դեպքեր, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

## **9. Վեճերի լուծումը**

Պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է դատական կարգով:

## **10. Ծանուցում**

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծանուցումները, հաղորդումները կատարումը համարվում է պատշաճ, եթե կատարված է գրավոր և տրված է առձեռն, կամ ուղարկված է պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով կամ կատարված է փոխանցում ֆաքսի միջոցով կողմի ստորև նշված հասցեով կամ այդ նպատակով կողմի նշած մեկ այլ հասցեով, ընդ որում յուրաքանչյուր



դեպքում պետք է առկա լինի գրավոր ստացական, որը կարող է փոխանցվել էլեկտրոնային փոստի կամ ֆաքսի միջոցով:

## 11. Այլ դրույթներ

11.1 Սույն պայմանագրի հավելվածները կազմում են նրա անբաժանելի մասը.

11.2 Սույն պայմանագիրը կազմված է 3 օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ.

11.3 Պայմանագրին կցվում է հավելված՝ N 1 ֆինանսական առաջարկները և ընդերքօգտագործման վճարները 2 էջից, հավելված՝ N 2 հանքավայրի պաշարներն ըստ հանքային մարմինների 3 էջից:

## 12. Կողմերի գտնվելու վայրը, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Լիազոր մարմին «Հենրգետիկայի և բնական պաշարների նախարարություն»

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 2  
(փոստային դասիչը, գտնվելու վայրը)

հեռ.521-964, ֆաքս՝ (37410) 526-365; Ֆին. նախ. գործառն. վարչ. հ/հ900011009082  
(հեռախոսահամարները, հեռագրային դասիչները, հաշվարկային հաշիվ)

Ընդերքօգտագործող, ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային 4, 3301

(փոստային դասիչը, գտնվելու վայրը.)

հեռ.0285-5.90.00 «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Կապանի մ/ճ հ/հ247080149500

(հեռախոսահամարները, հեռագրային դասիչները, հաշվարկային հաշիվ, հարկային կոդը)

**ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ  
ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝**

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝**

**«ԴԻՆՈ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ ԲԱՄՓՆԻ» ՓԲԸ**  
(կազմակերպության անվանումը)

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ  
(անունը, ազգանունը)

ԻԼՅԱ ԳԱՐԿՈՎ  
(անունը, ազգանունը)

  
(ստորագրությունը)

  
(ստորագրությունը)

«27» հոկտեմբեր 2012թ.

«27» հոկտեմբեր 2012թ.

Կ.Տ.

Կ.Տ.

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

### 1. Պետական տուրքի և ընդերքօգտագործման վճարներ

1.1 ընդերքօգտագործման դիմաց ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարում են պարտադիր վճարներ (բնապահպանական, բնօգտագործման կամ ոռոգայթի)՝ «Բնապահպանական և բնօգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

1.2 ընդերքօգտագործման թույլտվության դիմաց ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվում է տարեկան պետական տուրք՝ համաձայն «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

**2. Բնության և շրջակա միջավայրի դրամագլուխ և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարներ**

2.1 ընդերքօգտագործման դիմաց ընդերքօգտագործողների կողմից բնության և շրջակա միջավայրի դրամագլխի վճարներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և վճարման կարգով:

2.2 օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և վճարման կարգով:

2.3 բնապահպանական աշխատանքների իրականացման համար դրամագլխից ընդերքօգտագործողին տրամադրվող գումարը չի կարող գերազանցել ընդերքօգտագործողի կատարած հատկացումների չափը:

2.4 օգտակար հանածոների արդյունահանման նախագծով նախատեսված միջոցառումների կատարումից հետո ընդերքօգտագործողի կողմից բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարված գումարի մնացորդը վերադարձվում է ընդերքօգտագործողին:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ  
ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝

«ԴԻՆՈ ԳՈՒԼԴ ՄԱՅՆԻՆԳ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ  
(ազմակերպության անվանումը)


ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

(անունը, ազգանունը)

  
«24» Հոկտեմբեր 2012թ.  
Կ.Տ.

ԻԼՅԱ ԳԱՐԿՈՎ

(անունը, ազգանունը)

  
(ստորագրությունը)  
«24» Հոկտեմբեր 2012թ.  
Կ.Տ.



Դինո Գոլդ Մայնինգ Քանիանի ՓԲԸ տրամադրվող Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի պաշարներն ըստ հանքամարմինների

N	Հանքային մարմին	Հատարված C+C <sub>1</sub> պաշար տ 01.01.2009թ.	Տրամադրվող պաշար										
			Պաշար					Քանակ					
			տ	CU %	Zn %	Pb %	Au գ/տ	Ag գ/տ	Cu տ	Zn տ	Pb տ	Au կգ	Ag կգ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	երակ 1	146560	50089	0,73	5,02	0,05	2,36	39,76	365,6497	2514,468	25,0445	118,21	1991,539
2	երակ 41	441673	285344	0,34	2,58	0,18	1,85	39,28	970,8496	7367,035	513,9792	528,2564	11216,17
3	երակ 44	167452	56637	0,93	2,84	0,23	2,53	59,84	526,7241	1608,491	130,2651	143,2916	3389,158
4	երակ 2	135609	32064	0,76	2,7	0,06	3,52	52,72	243,6864	865,728	19,2384	112,8653	1690,414
5	երակ 2ա	125247	100860	0,44	2,92	0,04	1,14	22,24	443,784	2945,112	40,344	114,9804	2243,126
6	երակ 5հար	271651	52399	0,44	2,92	0,18	5,29	85,51	230,5556	1530,051	94,3182	277,1907	4480,638
7	երակ 6	536500	26199	0,69	3,63	0,54	3,98	68,85	180,7731	1003,422	141,4746	104,272	1803,801

1

8	երակ 10	131593	15911	0,5	2,42	0,34	1,63	39,45	79,555	385,0462	54,0974	25,93493	627,689
9	երակ 13հար	266489	84225	0,5	2,78	0,12	2,52	51,67	421,125	2341,455	101,07	212,247	4351,906
10	երակ 13ա հար	128702	49240	0,52	2,05	0,07	1,68	37,84	256,048	1009,42	34,468	82,7232	1863,242
11	երակ 15	223920	27551	0,45	2,61	0,14	1,53	41,4	123,9795	719,0811	38,5714	42,15303	1140,611
12	երակ 16	120079	54856	0,64	1,17	0,05	3,92	69,2	351,0784	641,8152	27,428	215,0355	3796,035
13	երակ 22	333307	75881	0,9	2,07	0,1	3,8	54,81	682,929	1570,737	75,881	288,3478	4159,038
14	երակ 25	183219	77775	0,25	2,16	0,11	1,18	30,07	194,4375	1679,94	85,5525	91,7745	2338,694
15	երակ 27	526008	200534	0,53	2,27	0,12	2,42	50,34	1062,83	4552,122	240,6408	485,2923	10094,88
16	երակ 27ա	229149	56475	0,62	1,15	0,05	1,27	24,53	350,145	649,4625	28,2375	71,72325	1385,332
17	երակ 28	350203	104228	0,85	2,26	0,09	2,13	51,08	885,938	2355,553	93,8052	222,0056	5323,966
18	երակ 31	359318	133564	0,29	2,18	0,04	1,69	44,14	387,3356	2911,695	53,4256	225,7232	5895,515
19	երակ 33	270489	173934	1,05	3,21	0,31	6,01	169,58	1826,307	5583,281	539,1954	1045,343	29495,73
20	երակ 34	260539	140593	1,28	3,98	0,11	9,52	133,45	1799,59	5595,601	154,6523	1338,445	18762,14
21	երակ 36	98595	95640	0,33	2,81	0,13	1,65	48,68	315,612	2687,484	124,332	157,806	4655,755
22	երակ 38	831118	25144	0,4	2,1	0,26	1,82	69,66	100,576	528,024	65,3744	45,76208	1751,531
23	երակ 39	145007	40992	0,68	1,49	0,05	2,08	50,2	276,7456	610,7808	20,496	85,26336	2057,798
24	երակ 1հար	345837	133661	0,57	2,63	0,08	2,4	37,24	761,8677	3515,284	106,9288	320,7864	4977,536
25	երակ 5իյս	672248	176469	0,54	3,13	0,18	2,83	60,2	952,9326	5523,48	317,6442	499,4073	10623,43
26	երակ 63	148299	54694	0,57	2,3	0,09	1,63	38,71	311,7558	1257,962	49,2246	89,15122	2117,205
27	երակ 63ա	151708	68407	0,41	2,59	0,09	1,6	35,13	280,4687	1771,741	61,5663	109,4512	2403,138
28	երակ 67	144241	53357	0,61	2,4	0,11	1,45	28,49	325,4777	1280,568	58,6927	77,36765	1520,141
29	երակ 67ա	124959	59953	0,37	1,98	0,13	0,96	22,49	221,8261	1187,069	77,9389	57,55488	1348,343
30	երակ 40	188196	151254	0,61	2,43	0,12	2,27	33,42	922,8494	3675,472	181,5048	343,3466	5054,909
31	երակ 71	258113	52399	0,41	2,96	0,11	3,03	40,95	214,8359	1551,01	57,6389	158,769	2145,739
32	երակ 3	400403	77210	0,96	3	0,19	3,82	88,61	741,216	2316,3	146,699	294,9422	6841,578

2

33	երակ 4	330848	72809	0,61	2,63	0,19	2,01	69,24	444,7448	1017,807	190,8271	204,8743	3048,219
34	երակ 8	76506	40707	0,59	2,97	0,51	1,82	41,83	240,1718	1208,998	207,8097	74,08674	1702,774
35	երակ 9	34669	3392	0,91	6,48	0,26	3,3	70,09	30,8672	219,8016	8,8192	11,1936	237,7453
36	երակ 13իս	72558	53147	1,11	2,19	0,18	3,49	69,05	589,9317	1163,919	95,6646	185,483	3669,8
37	երակ 43	79681	15777	0,41	1,78	0,12	1,63	71,28	64,6857	280,8306	18,9324	25,71651	1124,585
38	երակ 51	121976	39556	0,83	4,55	0,36	1,18	35,09	328,3148	1799,798	142,4016	46,67608	1388,02
39	երակ 52	62700	26611	0,34	1,89	0,3	3,48	48,96	90,4774	502,9479	79,833	92,60628	1302,875
40	երակ 35ա	306789	111303	0,61	2,71	0,16	3,02	68,29	678,9483	3016,311	178,0848	336,1351	7600,882
41	երակ 46	349257	120593	0,74	2,53	0,07	2,2	34,04	892,3882	3051,003	84,4151	265,3046	4104,986
42	երակ 49	79456	80798	0,33	2,87	0,13	1,35	26,43	266,6334	2318,903	105,0374	109,0773	2135,491
43	երակ 53	139041	20097	0,34	1,78	0,04	0,91	13,66	68,3298	357,7266	8,0388	18,28827	274,525
44	երակ 56	109769	78002	0,45	2,92	0,11	2,11	29,42	351,009	2277,658	85,8022	164,5842	2294,819
45	երակ 57	113747	52290	0,88	1,1	0,05	2,61	40,09	460,152	575,19	26,145	136,4769	2096,306
46	երակ 58	355609	227258	0,38	2,3	0,05	1,56	31,38	863,5804	5226,934	113,629	354,5225	7131,356
47	երակ 61	107132	108622	0,64	1,77	0,09	0,94	20,82	695,1808	1922,609	97,7598	102,1047	2261,51
48	երակ 62ա	19519	189902	0,43	3,08	0,14	3,84	35,35	730,5786	5232,982	237,8628	652,4237	6006,036
Ընդամենը		3805159	0,620402	2,754361	0,141605	2,829048	55,16896	23607,28	104807,8	5388,288	10764,98	209926,7	

«Հ հերթերի կազմակերպիչի և բնական պաշարների  
նախարար»



Ա.ՄՈՎԱԽԱՅԱՆ

«ՀՀ» Հոկտեմբեր 2012թ.

ընդերքագտագործող  
«Դինո Գոլ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ի  
գլխավոր տնօրեն

Ի. ԳԱՐԿՈՎ

«ՀՀ» Հոկտեմբեր 2012թ.



ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅՄԲԵՐԻ 27-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊՎ-183 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

«25» 08 2015թ.

1. Պայմանագրի 1.2 կետում <1 հավելվածից, որը> բառերը փոխարինել <1,2,3 հավելվածների, որոնք> բառերով:
2. Հավելված 2-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2-ի:
3. Պայմանագրը լրացնել հավելված 3-ով:
- 4.<2. Պայմանագրի առարկան > բաժնի 2.1 կետում՝
  - 1) առաջին պարբերության մեջ՝ <մինչև 2020թ-ի հուլիսի 14-ը> թվերը և բառերը փոխարինել <մինչև 2050թ-ի ապրիլի 1-ը> թվերով և բառերով.
  - 2) հանել <ա> և <բ> ենթակետերը՝
  - 3) <հաշվեկշռային պաշարներն օգտագործման ամբողջ ժամանակի համար> տողում՝ <3805159տ> թվերը փոխարինել՝ <17859> հազ. տ թվերով, իսկ <ըստ C<sub>1</sub>+ C<sub>2</sub> կարգերի> բառերը լրացնել՝ <C<sub>1</sub> կարգի՝ 7390.6հազ. տ, C<sub>2</sub> կարգի՝ 10468.4 հազ. տ ոսկի-բամամետաղային հանքաքարի պաշար, որտեղ հիմնական օգտակար բաղադրիչներ՝ պղինձ-118.66հազ.տ, այդ թվում C<sub>1</sub> կարգով՝ 48,42հազ. տ, C<sub>2</sub> կարգով՝ 70,24 հազ. տ, ցինկ-487,64 հազ. տ, այդ թվում C<sub>1</sub> կարգով՝ 219,66 հազ. տ, C<sub>2</sub> կարգով՝ 268,18 հազ. տ, կապար-28,46հազ. տ, այդ թվում C<sub>1</sub> կարգով՝ 14,98հազ. տ, C<sub>2</sub> կարգով՝ 13,48հազ. տ, ոսկի-50282,19կգ, այդ թվում C<sub>1</sub> կարգով՝ 20153,73կգ, C<sub>2</sub> կարգով՝ 30128,46կգ, արծաթ-973,1տ այդ թվում C<sub>1</sub> կարգով՝ 402,7տ, C<sub>2</sub> կարգով՝ 570,4 տ, ուղեկից օգտակար բաղադրիչներ՝ կադմիում՝ 4422,43տ C<sub>2</sub> կարգով, ինդիում՝ 152,16տ C<sub>2</sub> կարգով, թելուր՝ 609.71 տ C<sub>2</sub> կարգով, սելեն՝ 88.94տ C<sub>2</sub> կարգով, գալիում՝ 258,6տ C<sub>2</sub> կարգով, ծծումբ՝ 1269,78 հազ. տ C<sub>2</sub> կարգով> թվերով և բառերով, լրացնել <հիմնական և ուղեկից բաղադրիչների պարունակությունները> տողը հետևյալ բովանդակությամբ՝ < պղինձ՝ 0,66%, C<sub>1</sub> կարգում՝ 0,66%, C<sub>2</sub> կարգում՝ 0,67%, ցինկ՝ 2,73%, C<sub>1</sub> կարգում՝ 2,97%, C<sub>2</sub> կարգում՝ 2,56%, կապար՝ 0,16%, C<sub>1</sub> կարգում՝ 0,20%, C<sub>2</sub> կարգում՝ 0,13%, ոսկի՝ 2,82գ/տ, C<sub>1</sub> կարգում՝ 2,73գ/տ, C<sub>2</sub> կարգում՝ 2,88գ/տ, արծաթ՝ 54,49գ/տ, C<sub>1</sub> կարգում՝ 54,49գ/տ, C<sub>2</sub> կարգում՝ 54,49գ/տ, կադմիում՝ 247,63գ/տ C<sub>2</sub> կարգով, ինդիում՝ 8,52գ/տ C<sub>2</sub> կարգով, թելուր՝ 34,14գ/տ C<sub>2</sub> կարգով, սելեն՝ 4,98գ/տ C<sub>2</sub> կարգով, գալիում՝ 14,48գ/տ C<sub>2</sub> կարգով, ծծումբ՝ 7,11% C<sub>2</sub> կարգով> թվերով և բառերով.
  - 4) <Տրամադրվող օգտակար հանածոների պաշարները ըստ հանքային մարմինների՝ համաձայն՝ հավելված 2-ի> բառերը և թիվը փոխարինել՝ <«Դանդի Փրիշս Մեթալս Կապան» ՓԲԸ-ին տրամադրվող՝ Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հանքաքարի հիմնական և ուղեկից օգտակար բաղադրիչների ընդհանուր պաշարների, հանքային մարմինների, հորիզոնների և հաշվարկային բլոկների մասին> համաձայն՝ հավելված 2-ի> բառերով և թվով.
  - 5) <Պայմանագրի թիվ 1 հավելվածով նշվում են ընդերօգտագործողի ֆինանսական առաջարկները և նրա կողմից վճարվող ընդերօգտագործման վճարները> բառերը և թիվը լրացնել՝ < Հավելված 2 - «Դանդի Փրիշս Մեթալս

ուղեկից օգտակար բաղադրիչների ընդհանուր պաշարների, հանքային մարմինների, հորիզոնների և հաշվարկային բլոկների> - 29 թերթ

Հավելված 3 - <Հատուկ պայման> - 1 թերթ

Սույն հրամանով կատարված փոփոխությունները կիրառելի են «Դանդի Փրիշս Մետալս Կապան» ՓԲ ընկերությանը տրամադրված՝ ՀՀ Սյունիքի մարզի Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքի նկատմամբ՝ 2013թ-ի սեպտեմբերի 25-ից:

Սույն փոփոխությունները համարվում են՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-183 պայմանագրի անբաժանելի մասը:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ  
ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ՝  
« Դանդի Փրիշս Մետալս Կապան» ՓԲԸ

(կազմակերպության անվանումը)

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ

(անունը, ազգանունը)

  
«25» 08 2015թ.



Հրաչ Զարրայան

(անունը, ազգանունը)

  
«25» 08 2015 թ.





Հավելված № 2  
 Օգտակար հանածոների արդյունահանման  
 «27» նոյեմբեր 2012թ № ՊՎ-183  
 ընդերքօգտագործման պայմանագրի  
 «25» 08 2015թ-ի փոփոխությունների

«Դանդի Փրիշս Մեթալս Կապան» ՓԲԸ-ին տրամադրվող՝ Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հանքաքարի հիմնական և ուղեկից օգտակար բաղադրիչների ընդհանուր պաշարների, հանքային մարմինների, հորիզոնների և հաշվարկային բլոկների մասին:

(Համաձայն՝ ՀՀ ԷԲՊ նախարարության աշխատակազմի ՕՀՊ գործակալության 29.07.2009թ-ի թիվ 220 որոշման, հանքավայրի ստորգետնյա եղանակով մշակման աշխատանքային նախագծի հատոր 1, գիրք1-ի՝ աղյուսակ 2.2.1-ի, 2.2.2-ի և 3.4.1-ի)

Աղյուսակ 2.2.1

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հանքաքարի,  
 հիմնական և ուղեկից օգտակար բաղադրիչների ընդհանուր պաշարները  
 01.01.2008թ. դրությամբ

Անվանումը	Չափման միավորը	Հաստատված ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից, որոշում՝220, 29.07.2009թ.			
		Հաշվեկշռային պաշարներն ըստ կարգերի			Արտահաշվեկշռային պաշարներն ըստ կարգի
		C <sub>1</sub>	C <sub>2</sub>	C <sub>1</sub> +C <sub>2</sub>	C <sub>2</sub>
<b>Հանքաքարի և օգտակար բաղադրիչների պաշարները</b>					
Հանքաքար	հազ. տ	7390.6	10468.40	17859.00	144.90
<b>Հիմնական օգտակար բաղադրիչների պաշարները</b>					
Պղինձ	հազ. տ	48.42	70.24	118.66	0.45
Ցինկ	հազ. տ	219.66	268.18	487.84	1.64
Կապար	հազ. տ	14,98	13,48	28,46	0,14
Ոսկի	կգ	20153,73	30128,46	50282,19	113,76

Արծաթ	տ	402,70	570,40	973,10	2,51
Ուղեկից օգտակար բաղադրիչների պաշարները (C <sub>2</sub> կարգով C <sub>1</sub> +C <sub>2</sub> կարգերի բյուջեների եզրագծերում)					
Կադմիում	տ	-	-	4422.43	25.54
Ինդիում	տ	-	-	152.16	0.98
Տելուր	տ	-	-	609.71	3.86
Սելեն	տ	-	-	88.94	0.41
Գալիում	տ	-	-	258.60	1.96
Ծծումբ	հազ. տ	-	-	1269.78	9.65
Հանքաքարում օգտակար բաղադրիչների պարունակությունները					
Պղինձ	%	0,66	0,67	0,66	0,31
Ցինկ	%	2,97	2,56	2,73	1,13
Կապար	%	0,20	0,13	0,16	0,10
Ոսկի	գ/տ	2,73	2,88	2,82	0,79
Արծաթ	գ/տ	54,49	54,49	54,49	17,32
Կադմիում	գ/տ	-	247,63	247,63	176,26
Ինդիում	գ/տ	-	8,52	8,52	6,75
Տելուր	գ/տ	-	34,14	34,14	26,67
Սելեն	գ/տ	-	4,98	4,98	2,83
Գալիում	գ/տ	-	14,48	14,48	13,54
Ծծումբ	%	-	7,11	7,11	6,66

Աղյուսակ 2.2.2.

Շահումյան ոսկի-բազմամետաղային հանքավայրի հանքաքարի և մետաղների  
պաշարների բաշխումն ըստ յուրացման փուլերի

Անվանումը	Չափման միավորը	Հաշվեկշռային պաշարներն ըստ կարգերի			Արտահաշվեկշռային պաշարներն ըստ C <sub>2</sub> կարգի
		C <sub>1</sub>	C <sub>2</sub>	C <sub>1</sub> +C <sub>2</sub>	
1	2	3	4	5	6
I. 780 մ հորիզոնից վերև Պաշարները					
Հանքաքար	հազ. տ	3206,00	2310,87	5516,87	24,72
Պղինձ	հազ. տ	17,99	12,94	30,93	0,03
Ցինկ	հազ. տ	97,06	64,51	161,57	0,26
Կապար	հազ. տ	5,69	3,29	8,98	0,04
Ոսկի	կգ	7918,74	4825,37	12744,11	16,27
Արծաթ	տ	166,15	93,99	260,14	0,35
Կադմիում	տ	-	-	1366,14	4,36
Ինդիում	տ	-	-	47,00	0,17
Տելուր	տ	-	-	188,35	0,66
Սելեն	տ	-	-	27,47	0,07

Գալիում	տ	-		79,88	0,33
Ծծումբ	հազ. տ	-	-	392,25	1,65
Հանքաքարում օգտակար բաղադրիչների պարունակությունները					
Պղինձ	%	0,56	0,56	0,56	0,12
Ցինկ	%	3,03	2,79	2,93	1,05
Կապար	%	0,18	0,14	0,16	0,16
Ոսկի	գ/տ	2,47	2,09	2,31	0,66
Արծաթ	գ/տ	51,82	40,67	47,15	14,16
Կադմիում	գ/տ	-	247,63	247,63	176,26
Ինդիում	գ/տ	-	8,52	8,52	6,75
Տելուր	գ/տ	-	34,14	34,14	26,67
Սելեն	գ/տ	-	4,98	4,98	2,83
Գալիում	գ/տ	-	14,48	14,48	13,54
Ծծումբ	%	-	7,11	7,11	6,66

II. 780-700 մ հորիզոնների միջակայքում  
Պաշարները

Հանքաքար	հազ. տ	3429,09	2922,94	6352,03	21,25
Պղինձ	հազ. տ	24,76	18,87	43,63	0,12
Ցինկ	հազ. տ	102,03	78,58	180,61	0,20
Կապար	հազ. տ	6,89	3,83	10,72	0,01
Ոսկի	կգ	10410,82	8974,16	19384,98	20,97
Արծաթ	տ	190,33	178,06	368,39	0,34
Կադմիում	տ	-	-	1572,95	3,75
Ինդիում	տ	-	-	54,12	0,14
Տելուր	տ	-	-	216,86	0,57
Սելեն	տ	-	-	31,63	0,06

Աղյուսակ 2.2.2-ի շարունակությունը

1	2	3	4	5	6
Գալիում	տ	-	-	91,98	0,29
Ծծումբ	հազ. տ	-	-	451,63	1,42
Հանքաքարում օգտակար բաղադրիչների պարունակությունները					
Պղինձ	%	0,72	0,65	0,69	0,56
Ցինկ	%	2,98	2,69	2,84	0,94
Կապար	%	0,20	0,13	0,17	0,05
Ոսկի	գ/տ	3,04	3,07	3,05	0,99
Արծաթ	գ/տ	55,50	60,92	58,00	16,00
Կադմիում	գ/տ	-	247,63	247,63	176,26
Ինդիում	գ/տ	-	8,52	8,52	6,75
Տելուր	գ/տ	-	34,14	34,14	26,67
Սելեն	գ/տ	-	4,98	4,98	2,83
Գալիում	գ/տ	-	14,48	14,48	13,54
Ծծումբ	%	-	7,11	7,11	6,66

I+II. 700 մ հորիզոնից վերև

Պաշարները					
Հանքաքար	հազ. տ	6635,09	5233,81	11868,90	45,97
Պղինձ	հազ. տ	42,75	31,81	74,56	0,15
Ցինկ	հազ. տ	199,09	143,09	342,18	0,46
Կապար	հազ. տ	12,58	7,12	19,70	0,05
Ոսկի	կգ	18329,56	13799,53	32129,09	37,24
Արծաթ	տ	356,48	272,05	628,53	0,69
Կադմիում	տ	-	-	2939,10	8,10
Ինդիում	տ	-	-	101,12	0,31
Տելուր	տ	-	-	405,20	1,23
Սելեն	տ	-	-	59,11	0,13
Գալիում	տ	-	-	171,86	0,62
Ծծումբ	հազ. տ	-	-	843,88	3,06

Հանքաքարում օգտակար բաղադրիչների պարունակությունները					
Պղինձ	%	0,64	0,61	0,63	0,33
Ցինկ	%	3,00	2,73	2,88	1,00
Կապար	%	0,19	0,14	0,17	0,11
Ոսկի	գ/տ	2,76	2,64	2,71	0,81
Արծաթ	գ/տ	53,73	51,98	52,96	15,01
Կադմիում	գ/տ	-	247,63	247,63	176,26
Ինդիում	գ/տ	-	8,52	8,52	6,75
Տելուր	գ/տ	-	34,14	34,14	26,67
Սելեն	գ/տ	-	4,98	4,98	2,83
Գալիում	գ/տ	-	14,48	14,48	13,54
Ծծումբ	%	-	7,11	7,11	6,66

III. 700-400 մ հորիզոնների միջակայքում Պաշարները					
Հանքաքար	հազ. տ	755,51	5234,59	5990,10	98,93
Պղինձ	հազ. տ	5,67	38,43	44,10	0,30
Ցինկ	հազ. տ	20,57	125,09	145,66	1,18
Կապար	հազ. տ	2,40	6,36	8,76	0,09
Ոսկի	կգ	1824,17	16328,93	18153,10	76,52
Արծաթ	տ	46,22	298,35	344,57	1,82
Կադմիում	տ	-	-	1483,33	17,44

Աղյուսակ 2.2.2-ի շարունակությունը					
1	2	3	4	5	6
Ինդիում	տ	-	-	51,04	0,67
Տելուր	տ	-	-	204,50	2,64
Սելեն	տ	-	-	29,83	0,28
Գալիում	տ	-	-	86,74	1,34
Ծծումբ	հազ. տ	-	-	425,90	6,59
Հանքաքարում օգտակար բաղադրիչների պարունակությունները					
Պղինձ	%	0,75	0,73	0,74	0,30



1	2	3	4	5	6	7	8
<b>ՏԵՂԱՄԱՍ N°1</b>							
<b>Հանքերակ 1</b>							
780	Բլոկ 1-C <sub>1</sub>	1.60	2798	4477	13656	20	223.86
740	Բլոկ 2-C <sub>1</sub>	1.46	4520	6608	20155	40	165.21
700	Բլոկ 2-C <sub>1</sub>	1.46	4035	5898	17989	40	147.45
650	Բլոկ 3-C <sub>1</sub>	1.43	6522	9345	28504	50	186.91
	Բլոկ 4-C <sub>2</sub>	0.96	5660	5409	16497	50	108.18
600	Բլոկ 3-C <sub>1</sub>	1.43	5085	7287	22225	50	145.74
550	Բլոկ 5-C <sub>2</sub>	2.29	3950	9028	27534	50	180.55
<b>Հանքերակ 1<sup>ա</sup></b>							
780	Բլոկ 1-C <sub>1</sub>	1.66	2683	4454	13584	23	193.64
	Բլոկ 2-C <sub>2</sub>	1.38	2014	2780	8478	23	120.85
740	Բլոկ 1-C <sub>1</sub>	1.66	3740	6208	18934	40	155.20
	Բլոկ 2-C <sub>2</sub>	1.38	3396	4686	14292	40	117.15
700	Բլոկ 1-C <sub>1</sub>	1.66	3508	5824	17763	40	145.60
	Բլոկ 2-C <sub>2</sub>	1.38	3890	5368	16374	40	134.21
650	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.27	11194	14217	43360	50	284.33
<b>Հանքերակ 2</b>							
820	Բլոկ 1-C <sub>2</sub>	1.23	546	669	2042	9	72.76
780	Բլոկ 1-C <sub>2</sub>	1.23	6789	8320	25376	40	208.00
740	Բլոկ 2-C <sub>2</sub>	1.26	9946	12495	38108	40	312.36
700	Բլոկ 2-C <sub>2</sub>	1.26	10058	12636	38538	40	315.89
650	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.12	9208	10343	31547	50	206.86
<b>Հանքերակ 2<sup>ա</sup></b>							
780	Բլոկ 1-C <sub>2</sub>	1.29	5051	6495	19811	20	324.76
740	Բլոկ 1-C <sub>2</sub>	1.29	12623	16233	49510	40	405.82
700	Բլոկ 1-C <sub>2</sub>	1.29	5718	7353	22426	40	183.82
650	Բլոկ 2-C <sub>2</sub>	1.25	8787	10984	33500	50	219.67
<b>Հանքերակ 5 հրվ.</b>							
820	Բլոկ 1-C <sub>1</sub>	2.16	2724	5881	17936	9	653.40
780	Բլոկ 1-C <sub>1</sub>	2.16	4824	10415	31765	20	520.73
740	Բլոկ 2-C <sub>1</sub>	1.88	10512	19747	60227	40	493.67
700	Բլոկ 2-C <sub>1</sub>	1.88	8549	16058	48978	40	401.46
650	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.52	7178	10874	33166	50	217.48
	Բլոկ 4-C <sub>2</sub>	1.99	7125	14151	43160	50	283.02

3.4.1 աղյուսակի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8
600	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.52	3162	4790	14610	22	217.73
	Բլոկ 4-C <sub>2</sub>	1.99	3601	7151	21809	42	171.85
<b>Հանքերակ 5-ի դ.</b>							
820	Բլոկ 1-C <sub>2</sub>	1.98	1427	2828	8624	24	117.82
780	Բլոկ 1-C <sub>2</sub>	1.98	3424	6786	20698	40	169.66
740	Բլոկ 2-C <sub>1</sub>	1.72	3155	5421	16534	40	135.53
700	Բլոկ 2-C <sub>1</sub>	1.72	2802	4814	14682	40	120.35
650	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.27	3750	4762	14525	50	95.25
600	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.27	1822	2314	7059	33	70.13
<b>Հանքերակ 6</b>							
820	Բլոկ 1-C <sub>1</sub>	2.58	2558	6608	20154	7	944.00
780	Բլոկ 1-C <sub>1</sub>	2.58	634	1638	4996	40	40.95
740	Բլոկ 2-C <sub>1</sub>	2.14	18381	39393	120148	40	984.82
700	Բլոկ 2-C <sub>1</sub>	2.14	19586	41976	128026	40	1049.39
650	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.35	29031	39129	119343	50	782.57
600	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.35	27393	36921	112610	50	738.42
550	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.35	7595	10237	31222	14	758.29
<b>Հանքերակ 10</b>							
820	Բլոկ 1-C <sub>1</sub>	1.21	2445	2970	9058	38	77.56
780	Բլոկ 1-C <sub>1</sub>	1.21	7540	9158	27931	40	228.94
740	Բլոկ 2-C <sub>2</sub>	1.26	9164	11579	35314	40	289.46
700	Բլոկ 2-C <sub>2</sub>	1.26	4254	5375	16394	29	183.70
	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.89	1290	2437	7431	11	221.50
650	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.89	5053	9543	29106	50	190.86
600	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.89	1104	2084	6358	22	94.75
<b>Հանքերակ 11</b>							
820	Բլոկ 1-C <sub>2</sub>	1.95	2665	5192	15834	9	558.02
780	Բլոկ 2-C <sub>1</sub>	1.99	291	578	1763	25	23.13
740	Բլոկ 3-C <sub>1</sub>	1.85	13936	25773	78608	40	644.33
700	Բլոկ 3-C <sub>1</sub>	1.85	16347	30231	92204	40	755.77
650	Բլոկ 4-C <sub>2</sub>	1.42	24522	34701	105837	50	694.01
600	Բլոկ 4-C <sub>2</sub>	1.42	26007	36802	112248	50	736.05



550	Բլոկ 4-C <sub>2</sub>	1.42	5768	8162	24895	11	762.45
<b>Հանքերակ 11<sup>ա</sup></b>							
780	Բլոկ 1-C <sub>1</sub>	2.86	3588	10274	31335	40	4.04
740	Բլոկ 2-C <sub>1</sub>	2.33	4426	10319	31472	40	257.96
700	Բլոկ 2-C <sub>1</sub>	2.33	6165	14375	43843	40	359.37
650	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.96	4613	9041	27575	33	273.97
<b>Հանքերակ 13 հրվ.</b>							
820	Բլոկ 1-C <sub>1</sub>	1.85	2469	4572	13944	17	268.92
780	Բլոկ 1-C <sub>1</sub>	1.85	14541	26924	82119	40	673.11
740	Բլոկ 2-C <sub>1</sub>	1.52	10625	16170	49319	40	404.26

3.4.1 աղյուսակի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8
700	Բլոկ 2-C <sub>1</sub>	1.52	9208	14014	42742	40	350.34
650	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.26	13910	17541	53500	50	350.82
600	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.26	6465	8152	24865	33	250.69
<b>Հանքերակ 13<sup>ա</sup>հրվ.</b>							
820	Բլոկ 1-C <sub>1</sub>	1.75	1950	3419	10428	18	195.38
780	Բլոկ 1-C <sub>1</sub>	1.75	8441	14796	45129	40	369.91
740	Բլոկ 2-C <sub>1</sub>	1.23	5813	7160	21839	40	179.01
700	Բլոկ 2-C <sub>1</sub>	1.23	5386	6635	20236	40	165.87
650	Բլոկ 3-C <sub>2</sub>	0.95	6493	6181	18853	50	123.63
600	Բլոկ 3-C <sub>2</sub>	0.95	4207	4005	12216	45	89.06
<b>Հանքերակ 14</b>							
820	Բլոկ 1-C <sub>1</sub>	1.34	4384	5862	17878	40	146.54
780	Բլոկ 1-C <sub>1</sub>	1.34	6132	8198	25003	40	204.94
740	Բլոկ 2-C <sub>1</sub>	1.20	5938	7109	21683	40	177.73
	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.66	4890	8098	24698	40	202.44
700	Բլոկ 2-C <sub>1</sub>	1.20	6380	7638	23295	40	190.95
	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.66	5799	9602	29286	40	240.05
650	Բլոկ 4-C <sub>2</sub>	1.27	16034	20444	62355	50	408.88
600	Բլոկ 4-C <sub>2</sub>	1.27	17755	22587	68889	50	451.73
550	Բլոկ 4-C <sub>2</sub>	1.27	2665	3390	10341	13	255.11
<b>Հանքերակ 14<sup>ա</sup></b>							
780	Բլոկ 1-C <sub>2</sub>	1.16	268	312	952	5	61.32
740	Բլոկ 1-C <sub>2</sub>	1.16	2045	2381	7261	40	59.52
	Բլոկ 2-C <sub>2</sub>	1.37	527	721	2200	10	70.85
700	Բլոկ 1-C <sub>2</sub>	1.16	2407	2802	8545	40	70.04
	Բլոկ 2-C <sub>2</sub>	1.37	1871	2562	7813	40	64.04
650	Բլոկ 2-C <sub>2</sub>	1.37	7346	10057	30674	50	201.14
	Բլոկ 3-C <sub>2</sub>	1.90	1678	3192	9736	50	63.84
600	Բլոկ 2-C <sub>2</sub>	1.37	6126	8387	25579	50	167.73
	Բլոկ 3-	1.90	1526	2904	8856	50	58.08

	C2						
550	Բլոկ 2-C2	1.37	953	1305	3980	16	80.85
<b>Հանքերակ 15 հրվ.</b>							
820	Բլոկ 1-C <sub>2</sub>	1.57	2218	3488	10638	2875	1.21
780	Բլոկ 1-C <sub>2</sub>	1.57	9573	15055	45919	40	376.38
740	Բլոկ 2-C <sub>2</sub>	1.42	13102	18645	56867	40	466.12
